

կամ թէ զօրէն Նուենտացւոյն։ — Այլ գիրերաց դու հակարաշ
գուն 'ի գործ զուգել ղընես։ զի չեն ինձ կամք ամենեին
ի խափանել զոլ ազահ' թէ իցես խեռ և ժիտ ըմբոստ։
Զի 'նդ ջանայիս և ընդ աներըն վիսելլայ գոյ ինչ խըտիր։
Ամենայինի է շափ կըշիս։ Են են, այո՛, ըստոյդ սահմանք,
Քան զըրս ուրեք անդրագոյն շմարթի երբեք կալ ուղղութեան։
Դարձ անդր ուստի ելի առնեմ։ Հիցէ արդ ոք իրրե զագահն
Անձնահաճ, այլ գովեսցէ զանազանիցն հետևելիս։
Եւ մաշեսցի նախանձարեկ յունել ըստինս գիրապարտր
Ալրի օտարին։ և ո՞չ արդեօք կըշուսցէ զանձն
Ընդ ամբոխի մեծի տնանկոցն, և ջանասցի գըլել զայլրվք։
Որ սոյնդունակ փութասցի՝ ծոխագունին միշտ պատահէ։
Զերդ մինչ սըմբակք զամեհի ձիս պախուցաթափ ճեպեալ վարեն,
Եւ կառավար պընդի զձիոց կընի՛ զիւրովքըն զըլելոց։
Յընչաց քերեալ զյառաջաղէմն՝ որ արշաւէն զոյդ ընդ յետինս։
Աստի ահա, զի դուն ուրեք մարթ է հնարել զըտանել
Որ ասասցէ երջանկարաստ կեցեալ, և գոհ մեկնեսցի
ի վճարել պահուն կենաց, զոր օրինակ յագ հացակից։
Որդ շատ իցէ։ զի մի գիշակըն կրիսպինեայ 'ի մատենից
Զիս բանափաղ համարիցիս, ոչ ևս այլ նոր յաւելից բան։

ՓԱՐԻԶՈՒ ԱՇԽԱՐՀԱՀԱՆԴԻՍՆ

— 46 —



ԱՅՄԱՆ, նշանաւոր օրը՝ արդէն հնացեալ և հեռաւոր յիշատակ
մ'եղած է զարդիս։

Այն օրէ յետոյ Արիսեան դաշտը հետզհետէ արագ արագ
կատարուելով՝ իւր բովանդակ պայծառութիւնն ստացած է սյֆմ։
Կապտագոյնը կը տիրէ ամենուրեք ազիւսաց կարմրոյն հետ զու-
գեալ, որ Աշխարհահանդիսիս կապոյս վիրագիրն տաւած է։
Ելքարտական լցոն ամէն երեկոյ կանսամաւրապէս կը լուսաւորէ
այսուհետեւ, գեղանի բայց և տարօրինակ բնագրոյն մի տաղով մսսնաւրա-
պէս Աշխական և Ալիրիկայ գեղորէից և գրանադանացն, յորս մարթ է շրջել
մինչև 'ի մետասան ժամ երեկոյին այս կեղծալուսնի լուսովն, և Թափառել
խրճթաց և եղէզնապատ բնակութեանց մէջ՝ որոց անտապտացեալ երեսյթը
և բնակողաց ախուր նայու ածքը՝ անդիմագրելի, թէպէտ անոյշ մելամոզիկ
խորհրդածութիւններ կ'ազդեն բեզ։

Ընենք մեր առաջին մուտքը յաշխարհահանդիսիս՝ քսան և երկու գրանց
զվարաւորէն որ 'ի Թրօքատէրօ։

Յաղթական կամար մ'է, ծաղկանց հովտի մը վրայ բարձրացեալ, Բուտոց և

տնկոց հանդիսաւորութիւնն է. որ վեց ամիս տևողութեամբ պիտի զարդարէ այս հանդէսս ամէն եղանակի և աշխարհի տնկովք ։ Ծաղկագարմանութիւնն, ծառադարձանութիւնն, ջերմանոցաց բոյսք, պարտիզաց տունկք, պաղտառու ծառք, կանաչշղիչնք խումբ իշումբ եղած կողովոց մէջ, աստ անդ թաւուտներ կազմած, ածուներու մէջ բաշխուած բուսական հարստութիւնը կը կազմին:

Ընթերցողն աւելցնէ երեւակայութեամբ ելեքտրական լրւոյ ազդեցութիւնն այս բուսատանոց մէջ, զոր ՚ի տուընթեան կը նկարագրենք՝ աստ անդ քայլերնիս ուղղելով ։ Հետարքը աշխալ մը, և զգացած տալաւորութիւննիս առանց կարգի և պարզապէս քարտիսի վրայ հանելով.

Չորս անգգալապէս ՚ի Այնն կը խոսնարին: Ալմո կամիջէն (Pont de l'Alma) աջ ու ձախ ճոփ և հազուազիւտ բուսականութիւն մը կը տիրէ, որոյ գալարի կանաչութիւնն է երայ կերպ արուեստակեալ անձրեահով ջրհաներով կոյս տառացած կը մրցի ածդկան բիւրազզի գունոց հետ: Տանց և սենեկաց զարդարանաց բայց՝ մօտ ուռ Հասարակածին և Ամերիկոյ հսկոց տնկոց, իւրաքանչիւր իրենց տեղն գրաւիր են.

Այսույն նշունաւոր ծաղկին վարդն է: Երկու հազար հինգ հարիւր տեսակը կը զարդարեն աստ Զուիցերից գիւղական տնակ մը, իսկ անդ անգլիական Բար մը, վերև մարիտանացի ճաշատուն մը. և կ'ընկերեն քեզ յոտս գարւեանգին որոյ հակապատկերն է կարապաց կղջին և լինդր-Ալյանտիկան շողեւաց հանդիսարանն (panorama), որ գետային և ծովային հանդիսին միջամայրը կը գրաւէ:

Այլ աստոնօր, յեզերս ջուրց, գեղանկար տեսիլս զօրաւոր մրցող մը կը գտնէ. այժմ՚ի ծաղկի գտնուող պաղատու ծառոց խումբն է: Կէս մզնաշափի տարածութեան վրայ գեղձենեաց, նանձենեաց, նշենեաց, թզենեաց և ծիրանեաց բազմութիւն մը զարնանային վարդապոյն և սպիտակ անուշարոյր ձեան ծածկոց մի կը սփռեն.

Ծառոց ներքեւ պարտիզանութեան և ծառադարձանութեան տեսակ տեսակ նորելուկ գործեաց և ցնցու զըհանից հանդէսն է, կրաններու և առագաստածածք տնակաց մէջ:

Մշակութիւնը կամ թէ շահախնդրութիւնը տարօրինակ ձեւեր տուած է ծառոց կէսու երկաթէ թելերու վրայ մշտառանջ գերութեան ենթարկեալ են այլք երկրտչափական ձեւեր տուած են, երկնիւղ, եռամիւղ, սանդղաձեւ, բնակաձեւ, որուեալ թուող ճիւզերով. այլք կոնաձեւ կը բարձրանան կամ բրդածեն սրածայր կը մեծնան:

Միայն անշահ բոյսերն իրենց շիմեն կարդարկուտ կերպարանն պահած են, գգուեալք փափկանիստ Ռայ-ցրաս անգղիական խոսոյ գորգերու վրայ, կազմելով աստ թաւուտ մը, անդ շատրուակի մը կենդանութիւն ազգելով. Հոս ծողկոսիրաց ժամանիր տեղին շինելով. Հոս ջերմանոցաց պակիեաց տակ իրենց փափուկ թերթերն ճածկելով, և կամ հովանաւոր ճեմելիքներ պատրաստելով, որոց յեզերս կանաչեղինաց ածաներու մէջ, լուրիսն, ոլոռն, ծներէին, տնտեսական հազար և մի բոյսը իրենց առաջին և արուեստակեալ կանաչութիւնը կը սփռեն: Լշակաց նշանաւոր անկիւն մը՝ պաղապարդ կեռասիսաց մօտ՝ յայտնապէս կը ցուցընի բռնի կամ թէ արուեստակեալ, լւս եւս՝ արտաքար կարգի խնամքով յառաջ քերած արդիւնքն: Այս հանաշեցինաց պարտէզն ՚ի վէրուստ դարի՞ իւր բազագրեալ մննդարար ջուրն կընդունի մեղմընթաց առուակներով, որ ածուներու մէջ կը բաշխուին:

Անդին մայրաւոր ծառոց խումբն է: Բարտիթ, հղեւինը, նոճիթ, գիշիթ, իրենց ստուար և ծանրակերպ բունզիթ, և ևս գուրս կը ցատկեցնեն մազլուզ ոշ-խոյժ տնկող հետաքրքրացարփ պայոյաքր, կլեմատիտը, յասմիկը, ճնողիկուզն, բազեղը, սին մը, աւերակ մը, ծածք մը, աղրիւր մը, ապակեգունդ ձոզ մը կը պատեն հազար ձեւերով, և կամ՝ ՚ի հողմնց տատանող քարայրի մը հոտ-աւէտ պակաքարանց խումբեր կը ձեւացնեն:

Կեղրոննական ծառուղին կ'առաջնորդէ ՚ի պարզ այլ վայելուչ աղիւսէ և երկաթեաց չէնթ մը. հասարակաց գործոց Պատանարանի ներկայացոցիշ Պալատն է: Երկուստեք՝ երկու թեթեալաց աշտարակի իրենց պառուտաւոր սանդղօք փարոսին ծայրը կը հանեն: Ելքետրական լուսաշտորակրս երե-սուն և երեք մէտր բարձրութեամբ կը լուսաւորեն մասամբ ՚ի ԱԷնն յան-դորրու խարսխնալ նաւաց սորմը, մասամբ ևս կը ծառայեն իրենց մոգական ճառագայթքը տարածելու ձորիս պարտիզաց վրայ: Տեսարան մը զոր զիւրին չէ նկարագրել՝ է երբ լուսոս սպառուած անշարժ բացադրյան կա-նաչութեան ետև ծառոց փոր միթան մէջ սենսուին տոկամեալ թիրաւոր վենեստիեան լապտերք: Միայն մեղմ հողմիկ մը փափոքելի է որ այս կար-մրագոյն յակինթները թթվացնէ կանաչ ենթակային վրայ: Ինըքս չինուա-ծոյս՝ փարոսներուն և ՚ի վոտանզի նաւաց օգնութեան գործիներ ՚ի տես դրուած են: Նշանաւոր է ճնշեալ շոգովով Ոյրեկեն (Sirène), որոյ ջերմացունչ մայր գործին միանգամայն փարոսի լցոսը կենդանացնելու կը ծառայէ:

Մասնաւոր խնամքով մարուր պահուած խճաբար ծուռումաւու զիքն կարծես կեդրոննանալ կը ջանան անգ, ուրանօր ատամիակերձ բուռոց դասն իրենց հովանաւոր վայրն ընտրած են: Կիսակերծան դղեկի մը վրայ կը տիրէ շքեղութեամբ յարոնացի զգքեաց թաւուտ մը, մօտ սպիտակ և թեթև կարմիր մագնուէցի:

Գիշ մը ստորեւ գարձեալ յարոնացի կոնարեր ծառք, յորս երեք նշանաւոր տունկը Յառնի, Գիլիոյ և Հիւսիսային Ամերիկայ Հսկայ գալարասիւնն կը ներկայացնեն, և են. *Sciadopitys, Araucaria imbricata, Melingtonia gigantea pendula.*

Անդին քարայր մը կէս մը ծածկուած ամենազդի ծառոց շրջապատի մը մէջ, որ կը տանին ՚ի փարը լաբիւրինթոս մը, ուրանօր անզգոյշ և ՚ի ծաղիկս զրա-ղեալ աչք կը կորսնցնեն իրենց ուղին. Ծակ մը իւր մաքուր ջրովն ասպար-ջականութիւն կու տայ Ջրային բուռոց: Մոլորելցն աշխատանքը կը փար-ձատքէ յանկարձագիւտ գարնանացին ծաղկանց բիւրազգի հաւաքում մը, որ լսիրիկինթոսի գունէն կողովէ կողով ծիծաղերս կ'իջեցնեն յափունս գետոյն, կորսուելով արմաւեննաց խմբի մը մէջ, որոց երկայնատարած տերեք՝ Հարաւայնն Գաղղիոյ ծառագարմանութեան օրինակ մը կ'ընծայն:

Աստանը Անտառաց Պատասն հասած ենք, յարուս հազար հինգ հարիւր քառակուսի մէդր տարածութեան վրայ Գաղղիոյ անտառոց տիէն տեսակ փայտք ՚ի ցցց դրուած են: Շէնքին ճակատն հիւսուած է ամէն տեսակ և գունով փայտք շերտերով: Ճան սիւնքն են գարաւոր ծառոց բունք իրենց կեղեովն հանդերձ, որ երկու մէծամեծ օրահներ վեր կը բռնեն: անոնց մին աշխարհիս ամէն տեսակ փայտք հաւաքում մի կը պարունակէ, միւսն անտառաց նկարը և տեսարանք և անտառաբանութեան տախտակը:

Անցողաբար ակնարի մը ձգենք մօտ Յարոնացի բուրաստանին, Սոյն այս երկիրս 1878ին Ախմարհականդիսին մէջ գեղեցիկ մասն մի գրաւեր էր. այս անգամ Նշանաւոր է իւր շրջանաց հաւաքածովն: Բոյսք՝ յարոնացի սպիտակ ենթակայի վրայ կապտագոյն նշանակարգութ յախնապակեայ թաղարներու

մէջ գրուած են: Բռնի կարճ պահուած կօնարեր բոյսք՝ կիսադարեան ծառք են, որ իրենց ազատութեան մէջ արտաքոյ կարգի բարձրութիւն մի կը ստանան, բայց աճումնին զիտմամբ արգելուած է ձևնացւոց ոտից նման: Պամպուէ ցանգ մը ոյս բուրասիտանս շրջապատելով՝ տեղացի յատուկ գեղանկար երեւյթ մի կու տայ:

Քիչ մ'անդին լուբսնապուրի մեծ Դիբութեան նշանաւոր վարդենեաց հաւաքումն է: և ՚ի կեցրոնին շատրուանի մ'առջն, Ստորին Նահանգն իւր հայակառ կակաչներն ՚ի ցոյց դրած է:

Անսպաս բազմութիւն մը մանուշակաց աստ անդ կը պսակին զանազան ածուներ, նշանաւոր է սեա թաւչագոյնը և ոսկիթերթը սեագիծ երակօրն:

Թաւուտներու մէջ ծածկուած են աջ ու ձախ ջերմանոցք պէսսիէս մեծութեամբ և ձեռվլ, քառակուսի, շրջաբոլոր, կիսաբորոր, գետնի մէջ թաղուած, կամ Հսկայա աւակեայ զանգակի, որ երբեմն մէկ տնկոյ՝ այլ հսաւարակարար բազմաթիւ մսկոս բուտոց հանելի օթեանն են, որոց ծաղկանց կեանքը երկուամսն կամ յանախ նոււազ ևս ժամանց՝ մէկ նուրբ թելէ մը կախուած է:

Եւ այս բցյսերն որ առաւուոէ առաւուու և եթի կ'ապրին, պիտի կենդանացնին այս վայր վեց ամսոյ չափ: Անսպաս է բնութիւնն իւր հաւշակերուաց մէջ. թերեւս ցաւակիցի հայուագիւտ բաժակաձեւ ծաղլիի մը մահը, որոյ դիրազգած մարբափայլ թերթիկը չէ կրցած երկար հանգութել բարերար լուսոյն՝ նախատինք ընել է բնութեան, որ այսօր վարդենեաց կը յաջորդէ վազիւ մրտավարզը, ապա Յունիսի այցելու աց կ'ընծայէ ջերմանչուա երկրի և սինեկաց զարգություներ, յիշոյ Յուլիսի պարտէղներ զարդարոց ծաղկունքն, աղաւնինը, արեանդէմը և իրադենին: ապա Կոստոսոսի թրուշանը, Սիափամը բարեկամակայք, հուսկա աւրեմն Հակտեմբերի պտուղը և տերեւազարդ բայսք. և երբ առաջին ցրտաւունչ Հողմերն յանիկարծ ՚ի կարմրագոյն տերեւս փոխն ձորոյս կանաչութիւնը և ոսկիծագիկը իրեն վերջին տկար ճգունքը ընծայէ պիտի ծանուցանք Աշխարհահանդիսին փակումն:

Ոնցնինք Ալմա կամուրջը և ձախ Կողմերուղերով քայլերնիս, տեսնենք անդ եղան նորութիւնը՝ մարդուս կենաց պատմութեան ընթացքին մէջ:

Անձաւարնակ նախամարդոյն քարայր մը՝ ժայռի մը կողից վրայ բացուած՝ կը ցուցընէ անդ ցեարդը գազանին երկիւ զէն ինքինքնը ապաստանած, անձրևոյ, ցրտոյ և ասապոյ խալալիի եղան: Քիչ մ'անդին եղիպտացի ընակութիւն մը, սեապատք կերպ կերպն ակարու որուց գրայ՝ որուն հողածած. քը թեթե սիւնակներով վեր բանուած է: Թափառական ցեղի մը վանքը որ իւր ընթացքից մէջ կանկ առած է առ վայր մի փիւնիկեցի տան մը շուրին տակ: Ոնցնին իրացիցոց տուն մը, յորում հրէական հնութեանց հաւաքածոյ մը կը տեսնուի: Խորուացի հին իւնան մը իւր կահ կարասեօր, անկողնովն, անդանովն և սսիրուագին: Մօս անոր՝ Պեղասուեանց տուն մը և ոչինչ հեռու նախական Հնդկին հիւզն ծափի մը ոստոց մէջ հաստատուած:

Ուրիշ զանազան հետաքրքրական իրաց մէջ՝ յիշենի ՚ի մասնաւորի Դարեհի ժամանակակից պարսկական բնակութիւն մը, իւր փայլուն աղիւսներով: Պերիկեսի ժամանակի յայն տուն մը, յորում սպասուէիր նոյն ժամանակի հագուստներ գգեցած՝ այցելուաց զովարա ըմբելիք կը մատակարարեն: Վաղղհուովմէական տուն մը՝ զանազան ժամանակ գտնուած աւերակաց համակառուովք շինուած:

Խսկ արդի ժամանակաց բնակութեանց մէջ՝ յիշելի է գեղանկար փայտէ տինակ մը սքանափինաւեան ձկնորսաց, որոյ դրան առջև Կորվեկիայէ բերած

մակոյինին 'ի տես դրուած է : Ալաւ գործատուն մը , յորում Գըրանչըզի համբաւաւոր ձորոյն վարդի իւղյ զտարան մի հաստատուած է : Անդին փայտի շերտերով հիւսուած իրուսական գեղեցիկ տուն մը , Սրարիոյ և Առանի սարիտակ տներն , որոց ճաթուտուն կաւը անսպատի կիզիչ արևուն մէջ . կը կարծեցընէ գքեզ , կեդրոնական Ափրիկիոյ և կարմրամորթից տձե խրճիթներն , որ գնու ևս տևող վայրեննեց աղզին ստորնագոյն սատիճանը կը ցուցընեն : Լարոնացւոց անկաձե խրճիթներն և Եսքիմացւոց ցրտին տնակներն :

Հարուսակելի

Հ . Գէորգ Պատան

ԹԱՆԳԱՐԱՆ ՇՈՒԱՍՏԱՆԻ

Ի ՊԱԼԱՏԱՆ ԼՈԽՎՈՒ Ի ՓԱՐԻԶ



Լոխվու այն նոր սրահքն՝ որբ Պ . և Տ . Տիկոլաֆուայի 'ի Շօշաստան ըրած հետախուզութեանց նուիրեալ էին , աժմարաց են հաստակութեան : Այս գանձ միքս արտաքյ կարդի կարեւորութիւն մ'ունին . այցելուք կը սմբանան գեղեցիկ կիտուածանկարեալ որմոց հատուածներուն վրայ , յորս կը նշնարուին այլ և այլ պատմական անձննք , իւրաքանչիւրն իրենց ժամանակաց ճոխապանույց զգեստուք : Ենքին սրահին մէջ երկոլսի և հսկայաձե խոյուկ մը ամենուն ուշադրութիւնը կը դրաւէ . ամէն կողմէ նշանաւոր առարկայք այցելուաց աշքը կը լցացնեն և հետաքրրութիւնը կը զարթուցանեն :

Պարոն և Տիկին Տիկոլաֆուայ յաջորդաբար երեք անգամ՝ ճանապարհորդեր են 'ի Շօշաստան , որոց հրամանաւ կատարուած պեղմանց արդիւնքն եղաւ ոչ միայն հնախօսական տեսակէտով թանկագին առարկաներ գտնել , այլ նաև վերանորոգել նոր տարրերով պատմութեան ամենին աւելի հետաքրրարկան գարերէն մին :

Յետ քանն և աւելի ևս գարերու , կրնամք ըսկել որ ճանապարհորդը վերականգնեցին Ալտաշխիս ե . Դարեհի թաղեալ պալատները , կարեցի չէ 'ի մէջ բերել աստ հետախուզոց լանից և աշխատութեան ամենայն հետևանքները , այլ միայն նոր թանգարանին քանի մի հետաքրրաշարժ առարկաները կ'ուզենք մեր ընթերցողաց ներկայացնել :

Բովանդակակ հաւաքմունք կրկին մասանց բաժնուած են . առաջին սրահին մէջ զետեղուած են արքունի պահանորդաց աղեղնաւորքն , առիւներ , սանդղաբաժններ , Մնծ քաջառորաց պալատէն հանուած հրաշալի կիտուածանկարներ , և մեր թուականին առաջին և երկրորդ գարուց մէջ գործածուած յուզարկաւորութեան համար հողէ անօթներ : Երկրորդ սրահին մէջ կան երկգլխի խոյակը , քանդակեալ քարինք , և արձանագրական յիշատակարան :

Մեր աստ ոչ աղեղնաւորաց և ոչ առիւնուց վրայ պիտի խօսինք . վտանգի այս բազմագոյն խորաքանդակք , հրաշալի մնացորդք աքւմենեան (աշհեմծութեան) գարուց՝ դժուարաւ կը նկարագրուին : Հարկ է աչքով տեսնել այն